ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

04. մայիսի 2011 թվականի N 169 – Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՐԳԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածով և 135-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել գյուղական համայնքի ղեկավարի հերթական ընտրություն 2011 թվականի հուլիսի 3-ին:

2.Առաջարկել թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել գյուղական համայնքի ղեկավարին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել գյուղական համայնքի նորընտիր ղեկավարին, որ լիազորությունները պետք է ստանձնի 2011 թվականի օգոստոսի 8-ին, այն ամրագրելով իր կարգադրությամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ